



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

621

12-15

4039

9621
n-15

ԱՎ Ե ՀԵԱՐԵԼ

ԵՐԿԱԹՈՒՂԻՆ

— — — — —

ԿԱԶՄԵՑ

ԵՐՈՒԱՆԴ ԴԱԶՈՐԵԱՆՑ

Հ 888 1 անուն օ-15 գյուղի մասն զօդ
լ 17 մաս գյուղի մասն պատ

37807



Թ. Ի Ֆ Լ Ի Զ

Տպարան Մովսես Վարդանեանի:

1888

ՀԱՅՈՎՀԵ Վ ԽԱ ՄԻ ԲԿԱՌԱՎԱՐԴ

— ପାତ୍ର କରିବାକୁ ପାଇଁ

ગુરૂ

ԱՐՄԵՆԻԱՆ ԲՈՒԺԱԿ

Доз. ценз. Тифлисъ, 12-го Июня, 1888 г.

Тип. М. Вартаняца, Тройц пер. домъ № 11.



૨૧૮૭

• *Journal of the Royal Society of Medicine* 1996; 89: 82-83

888 F

ՈՎԵ ՀՆԱՐԵԼ ԵՐԿԱՐՈՒՂԻՆ



Երկայումն մարդ չկայ, որ լասձ զինի
երկաթէ ճանապարհի մասին եւ շատ
մարդիկ էլ բազու են ունեցել նորա վրայ
ճանապարհորդելու։ Նորա վրայով ճա-
նապարհորդութիւն է անում թէ հա-
րուստ վաճառականը եւ թէ աղքատ բանուրի, որ իր
աշխատանքը վերջացնելով քաղաքում, այնքան ուրախու-
թեամբ շտապում է գնալ իր գիւղը, իր բարեկամներին
եւ ազգականներին տեսնելու։ Տեսնում ես, որ ամեն կող-
մից մարդիկ շտապով գնում են դէալի երկաթուզու կա-
յարանը, որը կառքի վրայ նատած, որը հետեւակ, իր
ճանապարհի շորերը ձեւին։ Այսուեղ ամենքը կենդանու-
թեան մէջ են. որը աշխատում է տոմակ վերցնել, որը
մտածում է իր ապրանքը շտապով յանձնել գնառքին եւ

ամենածոյլ մարդն անգամ աշխատում է շարժուել, արագացնել իր քայլերը։ Այն ինչ վագօնները, արդէն վազուց պատրաստ, կանգնած են երկար՝ փողոցի նման, եւ շուբեշարժ մեքենան սկսել է իր աղմկալից գործունէութիւնը։ Ահա լսուեցաւ զանգակի ձայնը եւ ամենքը շտապում են մտնել վագօնների մէջ։ Ամեն մարդ այստեղ իր վրայ է մտածում, ամեն ոք աշխատում է իր համար մի լաւ տեղ գտնել։ Վերջապէս բոլորը նստեցան, տեղաւորուեցան։ Լսուեցաւ երկրորդ զանգակը եւ վերջապէս երրորդը։ Մերենան սուլեց, անիւները դղբդաշին եւ գնացքը շարժուեց դէպի առաջ։ Վագօնների մէջ նստողներից ոմանք խաչակրում են երեսները, ոմանք որտանց ոգոց են հանում, ոմանք էլ ժպտում են, երեւակայելով, թէ շուտով կը տեսնուին իրանց եղբայրների եւ բարեկամների հետ։ Իսկ յետոյ քիչ-քիչ սկսվում են այստեղ զանգան խօսակցութիւններ, հունձի, տարուայ բերքերի, առուտաւրի եւ այլ շատ բաների մասին։ Վագօնի մէջ նստելու առաւել համագիստ է, քան թէ ձիու վրայ այնտեղ շարունակ միակերպ նստերուց մարդու կողքերը եւ մէջքը սկսում են ցաւել, անձրեւի եւ քամու տակ միշտ կարելի է թրջուիլ։ Իսկ այստեղ, հանդարտ, քո տան ալէս, կարող ես նստել եւ առանց յոզնելու, առանց նեղանալու, խօսել, գուարճանալ։ Կայարանում խմացնում են մեքենային ջրով, կերակրում են փայտով—եւ ահա նորից նա սկսում է թռչել, շուացնելով, աղմուկ համելալ օդի մէջ ստենում ես՝ մէկ օրուայ մէջ հինգ հարիւր վերատ նա անցաւ։ Իսկ լուսամուտից շարունակ երեւում—անհետանում են դաշտեր եւ մշակած արտերը։ Երեւում են եկեղեցիների ոսկեզօծ գմբէթները, տեղաբեր կամգնած են գեղեցիկ փայտաշէն տնակ-

ներ, որոնց մօտ պահնակներ, ձեռքերին դրոշակներ բունած պատիւ են տալիս ձեզ, Գալիս է գիշերը, սակայն ճանապարհորդները գիշերելու մասին ոչ մի հոգաշենը, ով որտեղ որ նստած է, այնտեղ էլ կարող է հանգստանալ, քնել։ Մէկը դնումէ գլխի տակ իր պայուսակը, միւսը—բաճկրնը, երրորդը հանգստացնում է իր գլուխը հարեւանի ուսի վրայ։ Սյսպէս հանգիստ քնում են իրանց համար ճանապարհորդները եւ մոքերողին անգամ չեն անցկացնում։ Թէ ով է մոտածել նոցա համար այս տեսակ ապահովութիւն, ով է առաջին անգամ աշխատել եւ հնարել երկաթէ ճանապարհը։ Սակայն, բորորդին աւելորդ չէ յիշել բարի խօսքով այն մարդու անունը, որ ամբողջ կեանքում աշխատել եւ մոտածել է։ Թէ ինչպէս անել, որ մարդիկ եւ ձիերը առանց ոտքերը կոտսրելու, կարողանան ճանապարհ գնալ հանգիստ եւ արագ։ Նա մանաւանդ, որ այդ մարդը մի հասարակ եւ շատ ակքատ հանքային բանւոր էր, որին Սոստած տուել էր միայն խելք եւ աշխատասիրութիւն։ Ով որ չի ծուլանայ կարգալ մինչեւ վերջը այս պատմութիւնը, նա կը ծանօթանայ այդ խելացի մարդու հետ։ Համարեա մեղանից հարիւր տարի առաջ, այստեղից հեռու մի երկրում, որ կոչվում է Անգլիա, կենում էր մի խեղճ բանւոր, որի ազգանունն էր՝ Ստեֆիենսօն։ Նորա գերդաստունը մեծ էր, դժուարութեամբ էր նա կարողանում կերակրել բոլորին եւ այդ խեղճը ստիպուած, առաւօտից մինչեւ երեկոյ շարունակ աշխատում էր։ Բայց գիտէք թէ ինչ էր նորա աշխատանքը. նա բանում էր ածխահանքի մէջ եւ ով որ չգիտէ, ահա պատմեմ, թէ ինչ բան է ածխահանքը։ Նատ տեղեր, գետնի խորքերում, գտանվում են քարածուխի ահագին շերտեր։

Այդ ածովսը համարեա թէ այնպիսի գոյն ունի ինչպէս
եւ հասարակ ածովս, բայց նորանից տեղի ամուր է:
Քարածուխը, ի հարկէ, մարդիկ չեն պատրաստել եւ նա
սոսացուել է այն պատճառաւ, որ մեզանից շատ հազար
տարիներ առաջ, այդ տեղերում եղել են անտառներ:
Ոչ ոք չէր կտրում այդ անտառները, նորա ոչ ոքի հար-
կաւոր էին, պատճառ, որ նորա չափավանց շատ էին
եւ այսպէս, մեծ քանակութեամբ բաւանելով, ծերանում,
ջարդլում եւ թափլում էին ցած: Նոյնանից մի քանիսը
մոռմ էին բնկած տեղերում, իսկ միւաներ, որ պատահ-
մամբ գետի կամ ծովի մօա էին բուսել, ջրի հոսմաքով
գնում եւ մի տեղ՝ աւազի կամ ցեխի մէջ թաղուած,
անհետանում էին: Այդ ծառերը պարկած էին լինում
ընդարձակ տարածութեան վրայ եւ իրանցով ծածկում
էին հողի ահագին մակերեւոյթ: Բայց նորա գետնի տակ
չէին փոռում, այլ միայն սեւանում էին, որովհետեւ նո-
ցա մէջ պարունակլում էր առասո քանակութեամբ խէժ-
եւ, բացի դրանից օդն էլ չէր կարողանում թափանցել
նոցա մօտ՝ այդպիսի հաստ եւ ծանր հողային լցուածքի
միջից, որը քանի գնում աւելի եւ աւելի քարդվում
հաստանում էր: Անցել են շատ հարիւր տարիներ, եւ այդ
ծառերը գետնի տակ մնալով, ածուխի պէս սեւացել
են եւ քարի պէս ամրացել:

Քարածովսը վառվում եւ մեծ տաքութիւն է ար-
ձակում իրանից: Եւ ահա, այն երկրներում, որուել պա-
կաս են անտառները, մարդիկ սկսեցին վառել քարա-
ծուխը, եթէ բարեբաղդաբար, նոցա յաջողուեց գտնել
երկրի խորքերում քարածուխի շերտերը: Քարածուխ գր-
տանլում է նաեւ Թուսատանի, Եկատերինօսիավ կոչուած
նահանգում, սակայն ոչ այնպէս առատ, որպէս ուրիշ,

Հեռաւոր կողմերումն է այդ: Բայց սաստիկ գժուար է
քարածովսի հանելը գետնի տակից: Սովորաբար նա շատ
խորն է լինում թաղուած եւ նախ հարկաւոր է գետինը
շատ վորել նորան գնուելու համար, իսկ երբ գամուե-
ցաւ, հարկաւոր է այնուեղ կտորներով ջարդել եւ յետոյ
բարձրացնել այդ կտորները լոյս աշխարհ: Հէնց այդ տե-
ղերը, որտեղ կտորում եւ քանդառում են քարածովսի
կտորներ, կոչվում են ածխահամքեր: Այդ գժուար է
աշխատել ածխահամքի մէջ: Ածուխը կտրում են մեծ մեծ
կտորներով բայց որպէս զինա աւելի հեծտ բաժանուի:
շատ անգամ վարում են ածուխի մէջ վորըիկ խորշեր,
լցնում են այնուեղ վառութեւ կրակ տալիս, վառողը
մեծ ոյժով բռնկում է եւ ածուխի ահագին կտորները
իրարից բաժանում, կտոր-կտոր է ամուս: Այսկերպ քան-
դում են ահագին անցքեր, բայց են ամուս ընդարձակ
մանավարչներ, միքանի վերստ հեռաւորութեամբ, եւ այդ
բոլորը գետնի տակ, ահագին խորութեան մէջ, որտեղ
հարկաւոր է աշխատել կրակլցութիւն: Այսպիսով ձեռք բե-
րած ածուխը, ձիերի կամ ձեռնաքարշ սայլսիների վրայ
առնում եւ դիզում են առանձին պահարանների մէջ,
որտեղից յետոյ սկսում են մերենաներով վեր բարձրա-
ցնել: Վիճում են այնտեսակ զարդուքերի դէպքեր, որ
այդ սառերկրենսյ անցքերի առաստաղը յանկարծ իջ-
նում է, կամ թէ չէ, նոցա մէջ, հեղեղի պատճառով,
ջուք է լցվում եւ այն ժամանակ, հարիւրաւոր բանուոր-
ների կեանքը ենթարկվում է բոլէտական սարստիելի մա-
հուան: Ահա, այստեսակ մի հանքի մէջ աշխատում էր
եւ Ստեֆենսօն, Սա վեց հատ վարքիկ վաւակներ (ոնէր
եւ նոցանից իրաքանչիւրը, վոքը հատմկից, պէտք է
աշխատեր, որովհետեւ հօր աշխատանքը բաւական չէր

նոցա կերաւիրելու համար։ Ատեգենանի որդոց մէջ աւ մենից ժիր ու ճարպիկն էր նորս երկրորդ որդին։ Գէորգը։ Այդ երեխան, եօթը նարեկան հաճալից, արգէն հօտապոթին էր անում եւ դորա հետ միասին, հսկում էր մի մեծ ճանապարհ և մաքսադրան (չաշտավա)։ Խօտ, երեկոյեան փակում էր դուռը եւ սպորտորի համար՝ ստանում էր օրական վեց կոպէկ։ Տաններկու տարեկան հասալից Գէորգը սկսեց աշխատել դաշտում։ Ճիերի պահապան էր, իսկ յետոյ նորան ընդունեցին ածխահանքի մէջ, որտեղ աշխատում էր նորս հայրը եւ մեծ եղբայրը։ Այնտեղ Գէորգը պարապած էր լինում շարանակակի ածուխի կոտրների հետ։ զանազան տեսակներից ջոկ-ջոկ խմբեր էր կազմում եւ յետոյ, դարսերով սայրի վայ տանում էր նշանակած տեղը։ Նա այնքան խելացի եւ աշխատասէր, աղայ էր, որ մինչեւ 14 տարեկան լինելը, արժանացաւ առաւել բարձր պաշտօնի։ Նորս հայրը, ծերունի Ստեփենոն, այստեղ ջրահան մեքենայի մօա հնոցապան էր, այսինքն միշտ վառում եւ տաքացնում էր մեքենայի վառարանը, ու Գէորգին էլ նշանակեցին նորս մօա օգնական։ Այժմեան աշխատանքը աւելի հեշտ էր երեխայի համար, իսկ թօշակը աւելի շատ, բայց նա մանաւանդ ուրախ էր այն բանին, որ հիմայ կարող էր հետաքրքրութեամբ նայել ու դիտել մեքենան, ինչքան որ կամենար։ Այնպիսի խորին ուշադրութեամբ նա դիտում եւ ուսումնամիտում էր մեքենայի բոլոր կազմութիւնը, որ շուպով կարողացաւ հառեցնել զանապահը և ի խոսնացաւ աշխատանքը։ (Զաշտավին սրբաւելու կողմի համար ականական ժողովուրդը կոչում է քրնարգելավի զբունացուույթ պիտիական ու զանապահ զամանակաշատ զօ՞ւ մեռնչխոյն դժուական) Զաշտավին սրբաւելու կողմի համար ականական ժողովուրդը կոչում է քրնարգելավի զբունացուույթ պիտիական ու զանապահ զամանակաշատ զօ՞ւ մեռնչխոյն դժուական)

կանալ՝ ոչ միայն թէ ինչպէս է շարժվում եւ գործում մեքենան, այլեւ գցնուէր՝ թէ նորանում կորաքանչիւր պառուտակը ինչուգեր է կատարում եւ ինչուն համար է շինած։ Նույսայս ու նույսա ու սքայն ու գէնուայն ու աշխատանսէր բաննոր էր, այլեւ շատ ուրախ, բարի եւ ընկերանէր պատանի էր, այնպէս որ շմասով թէ ընկերները եւ թէ գործարանապետը սկսեցին յարգել եւ սիրել նորան։ Երբ նա 19 տարեկան էր, նորան յանձնեցին ամբողջ մեքենայի կառավարութիւնը, այսինքն թէ վառարանի տաքացնելը, եւ թէ առ հասարակ, մեքենայի գործունէութեան վրայ հսկելը։ Այս պաշտօնը ծերունի հօր պաշտօնից աելի բարձր էր։ Մեքենան, որի վրայ հսկում էր Գէորգը, ինչպէս ասացինք, ջրահան մեքենայ էր, այսինքն ջուր էր բարձրացնում ածխահանքից։ Նորանում հասարակ, մազի չափ անկարգութիւն, ամենաթեթեւ խանգարումն կարող էր շատ մեծ թշուառութիւն պատճառել ածխահանքի մէջ, կարող էր ածխահանքը ջրով խեղդել այնտեղի բոլոր աշխատողներին։ Բայց Գէորգի վրայ կարելի էր յուսալ այս գէպօւմ, չնայելով նա դեռ շատ երիտասարդ էր։ Քանի որ հանքերի մէջ շարունակվում էր աշխատանքը, նա երբէք չէր հեռանում մեքենայից, իսկ հանգը սութեան ժամանակ ուշագրութեամբ սրբում եւ զնում էր նորան։ Նաբաժ օրերը բանւորներին տալիս էին վարձ եւ նոքա, մեծ մասամբ, հաւաքվում էին պանդոկների եւ զինետների մէջ, որտեղ սկսում էին հարբել, թուղթ խաղալ եւ զանազան շուայլութիւններ անել։ Բայց Գէորգը չէր սիրում քէփ անել եւ իր ժամանակը դատարկ բաներով անցկացնել, նորա ընկերների մէջ կային կարդալ

գիտեցողներ և ահա Գէորգը մեծ ադահոթեամբ լոռում
էր, երբ նոքա կարդում էին մի գիրք կամ լրագիր եւ
աշխատում էր լիմանալ թէ ինչ է կատարվում աշխատ-
հիս մէջ, ինչպէս են ապրում եւ աշխատում հեռու կող-
մերի մարդիկ, ինչպիսի երկիրներ ու քաղաքներ կան էլի
աշխարհիս երեսին: Նմանապէս շատ շանկանում էր նա
խմանալ, թէ ինչպէս են շնում զանտղն մեքենաներ,
բայց գերազարդար կարդալ նա չգիտէր եւ այդ հան-
գամանը ըստ սպառութիւնում էր նորան: ու մայեն
մնչ պէտք է ամսես դու կարդալը, — առում էին
նորան ընկերները, առանց կարդալու էլ քեզ ամենը
սիրում ու յարդում են, իսկ գործարանատէրը հաւա-
տում է եւ գիտէ, որ դու շատ խելացի ես եւ մեքենայի
հետ կարող ես լուրսել, եթէ որ մի վարձանք պատուի:
Իսկ երիտասարդ Գէորգը ոյխտէն էր պատասխա-
նում իր ընկերներին, և արդար մարդուն հարկաւոր է
նորա համար, որ տեղի կանայ ուրիշ մարդոց գործերի
հետ, գրեթե միջոցաւ հեջտութեամբ կարողանայ հաւ-
կանալ եւ գիտենալ այն, ինչոր յափիտեան անհասկանալի
կը մնայ կարդ պէտք չգիտեցողի համար: Մարդ, որքան էլ
նա խելացի լինի, առումնոց կարդալու ոչ մի բան չի կա-
րող անել, բայց կարդալ գիտենալավ, նա շատ կարճ ժա-
մանակում, խելացի գրեթե չնորդէիւ, կը հսկանայ շատ
ճշմարտութիւններ եւ ի զարք տեղը ադամանրի բաների
վրայ երկար չի մասճի: Անզ ցցեց մազած: Անզուն
կան մարդիկ, որնք միայն գանգանուել գիտեն,
թէ իրանց վորք հասակից ու նում չեն սովորեցրել, բայց
իրանք սկի չեն էլ մոսածում յետ բերել կարած ժամա-
նակը: Գէորգը այդ անեսակներից չէր: Նա գիտէր,
որ հայրը կարսպանում էր հազի կերպել նոյն եւ ուս-

ման լիրայ մոտածել անգամ նաև չէր կարող, ուստի վճռեց,
որ եթէ: վորք հասակում չէ յաջողուել նորան աւտում
առնել պէտք է աւրեմն սովորել մեծ հասակում: Նորա
բաղդից հարեւան գիւղում կար մի ուսումնարան եւ
ահա, Գէորգը առանց երկար մոսած ելու սկսեց յաճա-
խել այստեղ, որ աղասի ժամանակը ուսման վրայ աջ-
խատի: մասայ ու ուղիւնաց զնի աղու ու այ այս
նա սովորում էր վարքիկ երեխաների հետ, եւ ու-
սուցին սպառիս էր շաբաթական եօթը կողէկա հարկէ
19 տարեկան պատանու համար շատ ուրախութեան մասին չէր
մասձում: նա ուղում էր կարդալ սովորել ուղեց ամ-
սուաց ընթացքում: նա սովորեց արդէն շատ լաւ կար-
դալ եւ բաւականին յաջող էլ գրում էր: Սպառին գորա-
նով նա քրաւականացաւ: Նուսավ նա թողեց այդ ուսում-
նարանը եւ սկսեց յաճախել մի այլ ուսումնարան, որ-
տեղ սովորում էր թուաբանութիւն: Ուսումը հեջտ չէր
յաջողվում Գէորգին: Ամբողջ գիշերներով աշխատում էր
նա գասերի համար, գրեթե չէր թողնում իր ձեռքից եւ
այսպէս կարողացաւ սովորել այնքան, որքան որ գիտէր
ուսուցիքը: Ու ու զնուն ուած ուղղական վասպան անուն
Ոյժմ ուսման նա վարձ տալիս էր շաբաթական
ասան եւ հինգ կողէկ եւ բայց գրանից, առում էր
նաեւ գրեթե: Ոյդ բողորի համար հարկաւոր էր նորան
փազ, իսկ որովհետեւ աշխատանքը շատ բիշ էր, ուստի
այդ գրութիւնից դուրս գալու համար, Գէորգը
մնացած պարապ ժամանակն էլ սկսեց զանազան գործեր
կատարել, ինչ որ գալիս էր նորա ձեռքից: Նա սկսեց
կարկատել բանւորների շորերն ու ունամնները եւ այդ
պարապմունքը նորան կամոնաւոր օգուտ էր բերում,

որովհետեւ բանուորների հագուստով շարունակ պատառ
կում եւ մաշկում էր աշխատութեան ժամանակ: Գէորգի
փողը քանի գնում շատանում էր: Վերջապէս նա կարո-
ղացաւ այնքան փողյետ գցել, որ գնեց իր համար մի
էժանագին տնտեսութեան ամուսնացաւ գեղեցիկ ու համեստ
մի ազդկայ հետ: Այժմ Գէորգ Ստեփենսոնի դրութիւնը
շատ լաւ էր: Նորա կինը բարեսիրտ ու ժրաջան մի աղ-
ջիկ էր, աշխատակալ աշխատում եւ տան մէջ իստակու-
թիւն, կանոնաւորութիւն էր պահպանում, իսկ Գէորգը,
տօն օքերին, փոխանակ ընկերների հետ ման գալու,
կարդում էր զանազան գրեկը, որոնց մէջ պատմած էր
ինում զանազան մեքենաների շինութեան մասին եւ այդ
մէսով, աւելի եւ աւելի հարուստում էր գիտութեան
պաշարը: Բայց բանկարծ նրան պատճեցաւ մի դը-
բաղդութիւն: Մի օր, երբ Ստեփենսոնը աշխատութեան
էր գնացել, նորա տունը հրդէհ ընկառ, եւ, չնայե-
լով որ նորա հարեւանները, որ այնքան սիրում էին
խելացի եւ աշխատաւոր Ստեփենսոնին, շտապով մարել
էին հրդէհը, սուկայն այդ բոլոր խառնակութեանց ժա-
մանակի, տան մէջ շատ բաներ էին փշացել, որոնց թւում
նաեւ պատի ժամացոյցը: Նատ ծանը էր Գէորգի հա-
մար, վերադառնութ աշխատանքից, տեսնել իր սիրելի
ժամանացոյցը գետնի վրայ, ջարդուած ու կեղտոտած: Քիչ
ժամանակ չէր նուաշխատել եւ փող յետ գցել այդ ժա-
մանացոյցը առնելու համար: Իսկ այժմ նա ոչնչ բանի
պէտք չէր: Հարեւանները խորհուրդ էին տալիս նորան
յանձնել ժամացոյցը մի վարպետ ժամագործի՝ վերանորո-
գութեան համար, որովհետեւ այդ էժամ չէր կարող
գութեան համար, որովհետեւ այդ էժամ չէր կարող
պէտք նորից ինքը նորից սկսեց մասնակութիւնը:

իւրաքանչիւր մասը առանձին, լաւ սրբեց եւ այնպէս
գեղեցիկ նորոգեց, որ այնուհետեւ բոլոր գրացիները
նորա մօտ էին քերում նորոգելու ժամացոյցները եւ
Ստեփենսոնը հռչակուեցաւ ամբողջ թաղի մէջ: Այս
Սակայն երկար շտեւեց նորա խաղաղութ երջանիկ գու-
շութիւնը: Մի սարուց յետայ նորան մի որդի ծնեց եւ
դորաւ հիսեւեալ տարին մեռաւ նորա կինը որ մեծ
ցաւ պատճառեց Ստեփենսոնին, եւ կուրացաւ նորա հայրը,
ծերունի Ստեփենսոնը: մի բանւորի անզգուշութեան
պատճառաւ: Այդ բանուորը մեքենայից դուրս թողեց գու-
րըշին՝ երբ որ ծերունի Ստեփենսոնը կանգնած էր մե-
քենայի առաջ գորոշին խփեց նորա երեսին եւ փշացրեց
թշուառ ծերունու աչքերը: Տեսնելով այդ անբարդու-
թիւնը, Գէորգը վեր առաւ հօրը եւ մօրը նախ իր մօտ
եւ ապա գնեց նոցա համար մի փոքրիկ տուն, պատրաս-
տեց ամեն սեսակ յարմարութիւններ նոցա կեանքի ա-
պահովութեան համար եւ միշտ աշխատում էր հանգստա-
ցնել, միխթարել իր ծնողներին: Սակայն ձախորդութիւնը,
ինչպէս առաւմ են, իրար վրայ է գալիս: Այդպէս էլ եղաւ
Ստեփենսոնի հետ: Նա գեռ չէր կարողացել իր ստացած
նեղութիւններից ու վնասներից աչք բաց անել, երբ էլի
նոր թշուառութեանց հանդիպեցաւ: Նուտով Սնգիա-
յում պատերազմ հրատարակեցին եւ Ստեփենսոնը, մի-
ճակի ենթարկուելով, ընկառ զինուորների շարքը: Դառն
էր խզճուկի գրութիւնը, չէր ուզում թողնել իր ծնող-
ներին, իր փոքրիկ որդուն, ափառում էր նոյնպէս հե-
ռանակ իր պարապետներից, զրկուել ուսումից: Եւ նա
ժողովեց իր ունեցած բոլոր փողերը, վարձեց իր տեղ
մէկ ուրիշ զինուոր եւ ինքը նորից սկսեց մնդաղար աշ-
խատել: Առաւօտից մինչեւ եկեկոյ նա աշխատում էր

ածխահանքում եք երեկոյեամ, դադրած չարշարտած գահ
լիս էր տուն եւ պկում էր նորոգել կոտրած ժամացոյց
ներ, կամ թէ չէ, մի ուրիշ գործով էր զբաղվում:
Դէորդ Ստեփենսօնի գլխաւոր չարչարանքը եօն հոգածով
զոմիւնը այս էր, որ մի կերպ կարողանայ շատացնել
իր առաջած արդիւնքը եւ ապահովէ թէ ծնողների
կեանքը, թէ իր որդու ապահայ ուստումը: Բայց շուտով
պատահեցաւ մի այնպիսի դէպքը, որ առանց
Ստեփենսօնի նմանել փառ եւ նշանաւոր պաշտօն: Ստեփենսօնի ծննդաւ
վայրից քիչ հեռու գտնանուող մի ածխահանքում վորած
էր մի մեծ ջրհոր, որի մէջ հաւաքիւում էին ածխահանքի
ստորեմբեայ բալոր ջրերը եւ այնտեղից մեքենայով շաւ
րունակ դուրս էր մղվաւ այդ ջուրը: Մեքենան, երեսի
մի ինչ որ պատճառաւ, գաղտարել էր գործելոց: Ած
խահաքում ծառայում մեքենավետները ամբողջ միտաւ
րի չարչարուեցան եւ չկարողացան շարժել մեքենան.
կանչեցին ուրիշ տեղերից գիտնական մեքենադորձների
եւ նորա էլ ոչինչ չկարողացան անել: Մեքենան շուայշ
նուայ եւ միքում էր, բայց գործել չէր կարողանում, իսկ
ջրհորում հետզհետէ բարձրանաւմ էր ջուրը եւ ածխա
հանքին մեծ վտանգ էր սպանում: Յիշտուի ջրից
Ստեփենսօնը մի քանի անգամ հարցնում էր այն
տեղի բանտիրներին. միքուաղասայ նրանցուապ նայ
ի՞նչպէս է գնում ձեր աշխատանքը: Յիշտ
Սյնպէս որ շուտով ջուրը մեզ կը իւեղի է, պա-
տասխանում էին շարունակ բանտիրները: Մի
Սյս բանը խոր մտածութիւն պատճառեց Ստեփեն-
սօնին եւ նա, չէնց որ մի աղատ ժամանակ էր գտնում,
իսկոյն գնում էր տեսնելու մեքենան: Մի անգամ նորա
բարեկամներից մէկը հարցրեց: Յիշտ բայուանը:

Դայդ Դէս կարողարդեօք նորոգել այդ մեքենան:
Եթէ ինձ թողնեն, եւ մի շաբաթից յետոյ բոլոր
այն ջուրը մեքենայով կը բարձրացնեմ, պատասխանեց
Ստեփենսօն: Այս խօսքերը շուտով հասցեածիրոցը
եւ նա, գիտենալու, թէ մեքենան վերջնականապէս վր-
շացիւ է, որ այլեւաչ կարել նորոգել, իսնչեց իր մօտ
Ստեփենսօնին: Այս ոյ ոյ զգանձրաց վայս ոյ յացաւաք
ծշմարիտ է, որ գուք յանձնառու էր մի լինում, մի
շաբաթուայ մէջ նորոգել մեքենան եւ ածխահանքի բո-
լոր ջուրը վեր համելու հարցրեց նա Ստեփենսօնին:
Սյո, ճշմարիտ է, պատասխանեց Ստեփենսօն:
Աւ ուրեմն, շուտով, սկսեցէք գործը որովհետեւ
արդէն ջուրը, սանտիկ բարձրացնելու է եւ կարող է սմեն
բան հեղեղել: Եթէ որ գուք կը յաջողցնէք այդ գործը,
որից հրաժարուեցան բոլոր գիտնական մեքենագործ-
ները, այնժամանակ՝ գուք ոչ միայն կանոնադրապէս կը
վարձատրիք, այլեւ նշանաւոր անգամ կը ժառանգէր
այսուեղ: Պայց մէջ նորուն իւել իմասս յացաւ
Սյդ խօսակցութիւնից յետոյ, մեքենան շուտով յանձ-
նեցին Ստեփենսօնին, թոյլ առաջ նորսն վերցնել իր
մօտ ու զածի չափ օգնականներ, եւ Ստեփենսօն, առանց
ժամանակ կորցնելու, սկսեց աշխատանքը: Չորս օր
գննում էր մեքենան, մաքրում, իւղ քառում եւ պիրում էր
նորա մասերը: Հինգերորդ օրը կարողացաւ շարժել նո-
րան եւ միւս օրը, կատարեալ յաջողութեամբ, ածխա-
հանքում ժողոված ջուրը մեքենայով քաշեց գէպի վեր:
Ածխահանքը բալորովին չորացաւ եւ բանաօրները իշան
այնտեղ աշխատելու, ի հարկէ ամեն մարդ ուրախացաւ
այդ բանի վրայ: Աշխատութեան վիխարէն Ստեփենսօնին

տուեցին 65 ր. իսկ մի քիչ ժամանակից յետոյ՝ նորան տուեցին մի լաւ ձիա ածխահանքի մէջ գնալ գնալու համար առանապահ նույնազնաց ցը խոսնեցի ցը ուղարկաց մաս

Այժմ Ստեփենսօնի դրութիւնը բարորովին գիտնուեցաւ. նա ունէր մի գեղեցիկ տնակը, վարքիկ այգիով, ուղիկը մեծ էր, ամենքը սիրում եւ գիտնական մարդ էին. համարաւմ նորան; Այժմ նա կարող էր ուղեցագիւ կատարել իր սրտի բաղձանքը—իր որդի Տօբերտին ու զարկել մի լաւ ուսումնարան։ որ ու ուղարկաց

Սակայն, ճայելով այս բոլորին, Ստեփենսօն գար, ձեալ շարունակում էր ուսանել: Նորա որդի ին ուղարկում էր իր հօրը զանազան գրքեր եւ նու կարդում էր այդ գրքերը: Բացի դորանից՝ այդ ժամանակամիջոցում նա կարողացաւ հնարել զանազան գործիքներ, համբերում աշխատող բանւածների դրութիւնը հեշտացնելու նպատակաւում նախատեսութ դոյս մարդու ուղարկաց ընդու

Առաջ ածխահանքում շատ շատ պատահում էին գաղերի ճայիթիւններ, այսինքն ածխահանքում ժողովուած գաղերը սաստիկ ոյժով միանում էին իրար հետ, երբ այնուեղ տանում էին որեւիցէ կրակ եւ այդպիսի ճայթումը մեծամեծ վնասներ էր տալիս բանւածներին։ Ստեփենսօն հնարեց մի այնպիսի լամպ, որի կրակը շրբ ջապատած էր երկաթէ ցանցով եւ այդ ջապամը կարելի էր վառել ածխահանքում, առանց ոպասելու, որ ճայթիւն պատահի: բարողու որ բոլոր բարեկառ էր այդ թիւն պատահի:

Նա հնարեց էլի որիշ զանազան գործիքներ եւ վերջապէս, մտածեց շինել շոքեկառք: Մինչեւ այդ ժամանակ՝ թէ մարդոց ճանապարհորդութեան եւ թէ ապրանքներ տեղափոխելու համար՝ գործ էին դնում ձիու կամ ուրիշ կենդանիների ոյժը: Ձիով մարդիկ հաղարա-

ւոր մզոն ճանապարհ էին գնում: Եւ յայտնի է մէկ որ քան դժուար է մարդու համար, ամեն տեսակ եղանակում ճանապարհ գնալ ձիով, կամ սալլով: Անիւները վիրում են ճանապարհի վրայ խորլ ակտոներ, որոնք աւելի մեծանում են անձրեւ ժամանակի, ձիերը սպառում են իրանց ոյժը, կառապանները չարչարում են, ճանապարհորդը, կամ ապրանքը գարձեալ չի համում ժամանակին իր տեղի: Թէ եւ շատ տեղերում շինում են խճուղիներ, սակայն այդ էլ յարմար չէ, որովհետեւ խճուղին չուտով վճանում է եւ ճանապարհորդութիւնը էլի գժուապանում էր:

Սուաել թանկ էր նոսում քարածովիսի ունեղափոխեց: Այս գժուապանութեանց առաջն առնելու համար, շատ ինեւացի մարդիկ աշխատում էին հնարել մի այնպիսի մեքենայ, որ կարողանար տանել զանազան պարանքներ, առանց ձիերի օգնութեան: Մի մարդու յաջողութեց հնարել այդպիսի մեքենայ, որ իր ետեւից տանում էր մի քանի կառքեր. բայց ափոսոր, որ մեքենան շատ ծանր էր զարդում եւ նորա տուած օգտութ շատ քիչ էր: Գէորդ Ստեփենսօնը լսել եւ կարգացել էր այդ բարոր մեքենաների մասին եւ, որովհետեւ ինքն էլ այժմ փորձառու մեքենագործ էր, ուստի նա եւս մտածեց շինել մի շոքեկառք, այսինքն մի այնպիսի մեքենայ, որ շոգիի օգնութեամբ կարողանար արագ շարժովի եւ իր ետեւից տանել ահագին ծանրութիւն: Յայտնի է, որ ջուրը, եռացման ժամանակ, սկսում

է արագութեամբ գոլորշիամսալ եւ այդ գոլորշին այն-քան մեծ ոյժ ունի, որ եթէ ամսնի բերանը ծածկինք, շոտոփ գոլորշին կը սատոկանայ եւ ներքին ճնշումից ամսնի կափարիք կը շարժուի եւ կը բարձրանայ վրայից: Գոլորշին ոնի մի յատկաթիւն որ սաստիկ ոյժով լայ-նանում է եւ եթէ նորան արգելք պատահի, չթողնի նորան լայնանալ ու տարածուել, այն ժամանակ՝ ահա-գին ոյժով նա մլսում է ճնշել կը դէմ գտանուզով ար-գելքին: Եթէ ամսնի մէջ շարօնակ ջուրը տաքանայ ու եռայ, խոկ ամսնի բերանը ամսուր փակուած լինի, այն ժամանակ՝ հետզետէ ներքին ճնշումը սաստիանալով անպատճառ կը տրաքեցնէ ամսնը եւ գոլորշին գուրս գայ միջից: Այսքան մեծ է գոլորշին զօրութիւնը: Խե-լու գայ միջից կը միջնորդ կարելի է նորա ոյժով ահագին լացի գործադրութեամբ կարելի է նորա ոյժով ահագին ածանութիւններ բարձրացնել եւ շարժել զանազան ա-ռարկաններ: Ճիմնուելով գոլորշին այս յատկութեան վրայ Ստեփենսօն մնածեց շինել մի կաթսայ, որի մէջ վա-ռարանով տաքանար ջուրը եւ առաջացած գոլորշին կա-րողանար շարժել յարմարեցրած մեքենայի անիւը: Նատ փող էր հարկաւոր Ստեփենսօնին, որ կարողանար շինել այդ մեքենան, սակայն բարեբաղտաբար, ոգնութիւնը շուտ հասաւ նորան: Ածխահանքի գործարանատէրը ա-ռաջարկեց նորան փող, որ նա շինէ այդ մեքենան եւ բացի գորանից, ստացաւ նոյնպէս ընծայ: Ածխա-Ստեփենսօնը կի հարկէ, շատ ուրախացաւ այդ բա-նին նա վարձեց բանւորներ եւ իսկոյն մկանց գործը: Սակայն քիչ աշխատանք եւ հոգացողութիւն չպատճա-ռեց նորան այդ: նա սակալուած էր ամեն բան ինքը շինել, որովհետեւ այնժամանակ մկային գործարին ու արագաշարիք էր գալոնում: Միայն մեր կամաց աշխատանքութիւն էր աշխատութեան վրայ, ինչ ամկա աշխատուելուց յետոյ արդէն պատրաստել էր նա ցանկացած, առաջին շոգեկառը: Սկզբում այդ մեքե-նան, իրաւ, մի քիչ դառնուած էր շարժվում եւ նորա մէ-ջից շոքին գործութէր գալիս մեծ աղմուկով ու շվլոցով, բայց այդ ոչինչ մեքենայի այդ թերութիւններն ուղղելը աւելի հեշտ էր, քան թէ նորից մի ուրիշը հնարել: Ստեփենսօն շատ բարական էր իր հնարած մեքենայով. նա տեսաւ, որ իր աշխատանքը եւ գիտութիւնը ի զուր չկլուզն, որ այդ գիտութեան լուսած հետեւանքները ու-ղիղ եւ անսխալ են: Սակայն ոչ ոք դեռ չէր ուշադրու-թիւն դարձնում նորա կատարած այդ մեծ գիտի վրայ եւ, առաջուայ պէս, շարունակում էին ձիերով տեղա-փոխել զանազան ճանրութիւններ: Միայն դորանից ինն տարի յետոյ, Ստեփենսօն կարողացաւ իրաւոնք ստանալ, մի փոքրիկ տարածութեան վրայ շինել երկաթէ ճանաւ-պարհ: Դրաւոնք ստանալուն պէս, նա մեծ եռանուով մկանց նորուգել իր մեքենայի թերութիւնները: Զի կաթ-տայի մէջից նա անցկացրեց մի խոլուակ, որտեղից անց-նում էր վառարանի բոցը: այդպէսով կաթսայի ջուրը աւելի ստանիկ ոյժով էր տաքանում: շոքիր առաջանալը նոյնպէս արագանում էր եւ մեքենան աւելի ուժեղա-նում արագաշարիք էր գալոնում: Միաւոնդ ժամանակ չուգունի ձողերը նա վոխարինեց երկաթի ձողերով, ինչ որ գնում են եւ հիմայ: Վերջապէս 1825 թուականին,

որ անուամ են հիմայ: Ամենահասարակ եւ անհրաժեշտ գործիքներն անգում՝ նա ստիպուած էր ինքը, իր ձեռ-ըով շինել: Բայց Ստեփենսօնը երբէք չէր յուսահատում: փոքր հասակից նա ստվորել էր աշխատութեան մեծ տոկո-նութեամբ ու համբերանովով, ստվորել էր՝ աշխատութեան մէջ յուսադամիակ իր ոյժերի եւ արիութեան վրայ: Ինչ ամկա աշխատուելուց յետոյ արդէն պատրաստել էր նա ցանկացած, առաջին շոգեկառը: Սկզբում այդ մեքե-նան, իրաւ, մի քիչ դառնուած էր շարժվում եւ նորա մէ-ջից շոքին գործութէր գալիս մեծ աղմուկով ու շվլոցով, բայց այդ ոչինչ մեքենայի այդ թերութիւններն ուղղելը աւելի հեշտ էր, քան թէ նորից մի ուրիշը հնարել: Ստեփենսօն շատ բարական էր իր հնարած մեքենայով. նա տեսաւ, որ իր աշխատանքը եւ գիտութիւնը ի զուր չկլուզն, որ այդ գիտութեան լուսած հետեւանքները ու-ղիղ եւ անսխալ են: Սակայն ոչ ոք դեռ չէր ուշադրու-թիւն դարձնում նորա կատարած այդ մեծ գիտի վրայ եւ, առաջուայ պէս, շարունակում էր ձիերով տեղա-փոխել զանազան ճանրութիւններ: Միայն դորանից ինն տարի յետոյ, Ստեփենսօն կարողացաւ իրաւոնք ստանալ, մի փոքրիկ տարածութեան վրայ շինել երկաթէ ճանաւ-պարհ: Դրաւոնք ստանալուն պէս, նա մեծ եռանուով մկանց նորուգել իր մեքենայի թերութիւնները: Զի կաթ-տայի մէջից նա անցկացրեց մի խոլուակ, որտեղից անց-նում էր վառարանի բոցը: այդպէսով կաթսայի ջուրը աւելի ստանիկ ոյժով էր տաքանում: շոքիր առաջանալը նոյնպէս արագանում էր եւ մեքենան աւելի ուժեղա-նում արագաշարիք էր գալոնում: Միաւոնդ ժամանակ չուգունի ձողերը նա վոխարինեց երկաթի ձողերով, ինչ որ գնում են եւ հիմայ:

շարժուեց առաջին շոգեկառքը եւ մարդոց ահազին բազմութիւն, մեծ հետաքրքրութեամբ նայում եւ զարսմանում էր այդ հրաշքով: Առաջնամբ իոց Մարդիկ զարմանում եւ հասկանալ չէին կարողաւնում՝ թէ ինչպէս նոցա աչ բերի առաջ, իրականութեամբ կատարվում է այն հրաշքը, ինչ որ նոքա միայն հեքիամթարի մէջ էին լիել որ մարդիկ ճանապարհորդում են վաւարանի վրայ նառած: Խակ այժմ, ոչ թէ հեքիամթի մէջ, այլ խևապէս շոգեկառքը բերեց իր ետեւից մի քաշնի վագօններ, որոնք լցուած էին քարածովով եւ Սահե Փենսօնը տրախանում էր, որ իր աշխատանքը եւ ուսումը անօգուտ չանցան:

Առաջ, երկաթէ ճանապարհ շինելիս, մասածում էին գլխաւորապէս քարածուիսի տեղափակութեան վրայ, որ Անգլիայում շատ մեծ գործադրութիւն ունի, որպէս վառելիք՝ թէ գործարաններում եւ թէ մասնաւոր տներ բռամ, խակ մարդոց համար շինաւմ էին միայն մէկ վաշգօն: Բայց մարդիկ շուտով հասկացան՝ թէ որքան հեշտ է ճանապարհորդել երկաթուղով, եւ ցանկացաների թիւը այնքան շատացաւ, որ հարկաւոր եղաւ շինել առանձին գնացք ճանապարհորդների համար: Նուտով առաջուաց տեղում, ուր գիգում էին քարածուիսի կատարներ, սկսեցին հաւաքուել զանազան կողմերից վաճառականներ, արհեստագործներ, երկաթուղու վրայ ծառայողներ եւ մի քանի տարուց յետոյ, բնդարձակ ապահովութեան վրայ հիմնուեցաւ մի ամբողջ վորեիկ քաղաք:

Զորս տարի յետոյ, ինչ որ շինել էին առաջին երկաթէ ճանապարհը, մասածեցին անցկացնել երկրորդ ճանապարհը՝ Լիվերպուլից դէպի Մանչեստր քաղաքը: Կի-

երպու Անգլիաի շատ հարուստ քաղաքներից մէկն է, որտեղ բերում են մեծ քանակութեամբ ապրանքներ զանազան տեղերից, եւ առաջել բամբակ: Իսկ Մանչեստրը ունի շատ գործարաններ, որոնց մէջ այդ բամբակից շինում են թելեր, չիթ կտաւ եւ ուրիշ բամբակի գործուածներ: Բայց որովհետեւ այդ երկու քաղաքների մէջ հազարդակցութիւնը վատ էր, ուստի բամբակը շատ անգամ ուշամասը էր ամբողջ մի քանի շաբաթներով եւ գործարանները մեծ վնաս էին ստանում, թէ բանւորների եւ թէ նոյն խակ տէրերի համար: Անգործութեան ժամանակ հազարաւոր աշխատողներ պարապ ու թշուառ էին մնում: Այստեսակ անյարմարութեանց վերջ տնկու համար՝ վճռեցին այդ ճանապարհի վրայ երկաթուղի անցկացնել եւ այդ գործը յանձնեցին Ստեֆենսօնին, որ ինչպէս յիտոյ կը տեսնենք շատ մեծ դժուարութիւններ պատճառեց նորան: Այն գիւղացիները որ սպարում էին երկաթուղու ճանապարհի վրայ, կարծեցին թէ երկաթուղին կը խէ նոցա աշխատումքը եւ մեծ կատազաւթեամբ սկսեցին ընդդիմանալ Ստեֆենսօնին, խանգարելով շարունակ նորա գործը: Բայց դժուանից, նոքա սպառում էին մինչեւ անգամ սպանել այդ մարդուն՝ այնպէս որ Ստեֆենսօն կարողանում էր միայն գիշերները անցնել ճանապարհի վրայով եւ դիտել նորա զանազան յարմարութիւնները: Աերջապէս ճանապարհի յատակագիծը վերցածած էր, տեղը որոշած եւ կառավարութիւններ շինուու իրաւունքը ստուգած: Ստեֆենսօն նշանակուեցաւ գլխաւոր տնօրէն այդ գործում եւ խակոյն սկսեց աշխատանքը՝ ճնայելով որ այստեղ էլ կային մի քանի արգելքներ: Ճանապարհի մէծ մասը անցնելու էր ճահիճների վրայով, որ չափազանց գործար էր չորսացնել եւ ամբացնել:

Ստեղենսօն Հնարեց մի տեսակ փայտեայ լաստեր եւ նուցանով ծածկեց բջոր ուղին, լաստերի վրայ լցրեց չոր հող, ըստական հաստ շերտով, եւ այդ հողի վրայ ամբ բայրեց երկաթուղու ձողերը: Այդքան հոգսերից յիշոյ ամեն բան յաջողեցաւ, ճահիճների վրայից անցկացրած ուղին ամուր եւ հաստատում էր: Խարազ հոգսերից յիշոյ բայց հիմայ դուքս եկան Ստեֆենսօնի նախամձող թշնամիները եւ մկնեցին ապացուցանել՝ նորա Հնարած երկաթուղին իսկապէս մի անպէտք բան է, որովհետեւ նա չի կարող գնալ քամու հակառակ եւ գնալիս էլ շատ հանդարտ կը գնայ: Նոյցանից իւրաքանչիւրը մի բանով աշխատում էր ցոյց տալ շոգեկառքի այս կամ այն թերութիւնը: Այնժամանակ ճանապարհի լողհանուր տնօրէնը, ցանկալով վերջ տալ այդ լինճարանութիւններին, յայանեց ամենքին, որ իւրաքանչիւր մորդ կարող է ներկայացնել իր Հնարած շոգեկառքը՝ բոլոր առանձին պարագաներով եւ, իբրև մրցանակ, նշանակեց երեք հազար մանէթ այն շոգեկառքին, որ մի ժամուտյ մէջ կը գնայ 20 վերատ ճանապարհ: Դուքս եկան հինգ հոգին որոնք ցանկանում էին իրանց շոգեկառքիւրով մրցել Ստեֆենսօնի հետ: Ստեֆենսօն կրկնակի զօրութեամբ սկսեց նորոգել իր մեքենան: Այստեղ նորան օգնում էր եւ իր որդին, որ սրդէն վերջացրել էր ուսումը եւ ստացել էր գերազանց մեքենագործի ախտղոս: Առաջուայ կաթսան, որ մէկ խողովակ ունէր, նա փոխարինեց մի նոր կաթսայով, որի միջից անց էին կացրած շատ խողով կներ: Այդ խողովակների միջով անցնում էր վառարանի քորը եւ մեծ արագութեամբ տաքացնելով կաթսայի ջորը, առաջ էր բերդամ շատ գորոշի եւ դորանից շոգեկառքը ստանում էր ահագին ոյժ: Մրցելու օրը

համաւ եւ փորձը ցոյց սուեց, որ Ստեֆենսօնի շոգեկառքը ամենից լաւն էր. նա ոչ թէ քսան, այլ ամբողջ վաթսուն վերատ էր գնում մի ժամուայ մէջ: Տեսնելով այդ, նորա թշնամիները պէտք է ակամայ խոստովանէին իրանց թուլութիւնը, իսկ ուրիշները գովարանում եւ շնորհաւորամ էին Ստեֆենսօնին: Առաջապահ զէ առ Սորանից յիշոյ Ստեֆենսօն միսեց աշխատել վագնների յարմարեցնելու վրայ, Հնարեց մեքենան կանգնացելու եւ նորա շարժոգութիւնը մեզմացնելու միջոցներ, անիւները իւղելու գործիքներ եւ այն:

Լիվերպուլեան երկաթուղին շինելուց յետոյ, Սկսեցին շինելու ուրիշ տեղերում ամբողջ մի քանի հարիւր, կամ հազ ը վերատ երկարութեամբ: Եւ այդ բոլոր ճանապարհների շինութեան մէջ մասմակցում էր միեւնոյն բանուոր Ստեֆենսօնը թէ օգտական խորհրդներով եւ թէ գործով: Ուստանաւ ուստանում նոյնպէս կան այժմ շատ երկաթուղիներ: Անապահին երկաթէ ճանապարհը շինեցին Թուսամատանում նիկողայս կայսեր ժամանակ՝ Մոսկուայից մինչ յեւ Պետերբուրգ: Այդ ճանապարհը կոչվում է նիկողայսեան երկաթուղի:

Իր օգտական գործունէութեան համար, Ստեֆենսօնը ոչ միայն Անգլիայում, այլ եւ շատ ուրիշ երկրներում, արժանացաւ մեծ յարգանաց ու պատուի: Զանազան տէրութիւններից նորան ուղարկում էին պատուաւոր շքանշաններ եւ թանկագին ընծաներ: Այսպէսով նա, շնորհիւ միայն իր խելքի եւ աշխատասիրութեան, կարողացաւ շատ հարստանալ եւ պատմութեան մէջ անմահ անուն վաստակեց:

Որովհետեւ փոքր հասակից նա սովորել էր ամեն

տեսակ նեղոթիւնների, այս պատճառաւ չհարստութեան
ժամանակ էլ, նա երբէք չէր ուզում տալին այնպէս,
ինչպէս որ ապրում են երթելի հարուստ աղաները: Մին-
չեւ իր կեանքի վերջը նա շարունակ աշխատում էր եւ
հանգստութեան փոխարէն, ծաղկիների եւ թռչունների
հետ էր զբաղվում: Բացի դորանից, նա միշտ օգնում
էր խեղձերին, հիմնում էր ուսումնարաններ, բաց էր
անում հաստրակալան գրադարաններ, որտեղից ամեն
մարդ ձրիապէս կարող էր գիրք վերցնել կարդալու հա-
մար:

Ստեփենածն մեռաւ 1848 թուին, այսինքն մեզա-
նից քառասուն տարի մուշ, բայց մահումից յեալոյ էլ
նորան ոչ ոք չմոռացաւ: Այժմ երկրագնդի ամեն տե-
ղերում աշխատում են երկաթուղի անցկացնել: Նորանով
ճանապարհորդում են ամեն հասակի եւ ասորիմանի մար-
դիկ: Մեծ եւ փոքր, հարուստ եւ աղքատ: Ամեն ոք
ճանապարհորդելիս, թող լիչէ այն աշխատասէր բանու-
րին, որի չնորհիւ մենք այժմ հանգիստ սենեակների
մէջ նստած, ահագին ճանապարհներ ենք գնում:

Հ.Հ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ՊՈԽԱԿԱՆ ՎԱԼՈՒՅՈՒՆ ԽԱՐԱՐԱԿԱՆ ԽՈՎՐԻ



ՀՀ Ազգային գրադարան



NL0075352

